

## Արձանագրություն N 7/148

ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհրդի 2015թ-  
հոկտեմբերի 15 -ի նիստի

### Օրակարգ

1. Աշխատությունների և ուսումնական ծրագրերի երաշխավորություն /զեկ.՝ Խ. Գալստյան/:
2. Դոկտորական և թեկնածուական թեմաների հաստատում /զեկ.՝ Խ. Գալստյան/:
3. ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի մեթոդխորհրդի նախագահի զեկուցումը /զեկ.՝ Լ. Վարդանյան/:
4. ՈԻԳԸ տարեկան գիտական նստաշարջանին ուսանողների ներկայացրած հոդվածների երաշխավորության հարցը /զեկ.՝ ամբիոնի վարիչներ/
5. Ասպիրանտուրայում ուսումը շարունակելու երաշխավորության հարցը /զեկ.՝ Խ. Գալստյան/:
6. Դոցենտի կոչման համար մրցույթի անցկացում /զեկ.՝ Խ. Գալստյան/:
7. Ընթացիկ հարցեր:

### Խորհուրդը որոշեց.

1. ա/ ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի ասիստենտ Լուսինե Պետրոսյանի “Հայերեն-պարսկերեն քաղաքագիտական և դիվանագիտական բառարան”-ը երաշխավորել հրատարակության:  
բ/ ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դասախոս Ամալյա Բաբայանի “Երկրագիտություն”/անգլերեն/ դասընթացի ծրագիրը երաշխավորել հրատարակության:  
գ/ ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դասախոսներ Խ.Գալստյանի և Ռ. Վանեսյանի “Քաղաքագիտության հիմունքներ” դասընթացի ծրագիրը երաշխավորել հրատարակության:
2. ա/ ԵՊՀ Քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի դոցենտ, քաղ. գիտ. թեկնածու Նարեկ Գալստյանի դոկտորական ատենախոսության թեմա հաստատել «Փոքր պետությունների արտաքին քաղաքական վարքի առանձնահատկությունները ինտեգրացիոն գործընթացներում» ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի համար:  
բ/ Արեն Սարգսյանի թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել «ՀՀ պաշտպանական բարեփոխումները ռազմաքաղաքական հիմնախնդիրների կարգավորման համատեքստում» ԻԳ. 00.02 «Քաղաքական ինստիտուտներ և

գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար: Գիտական ղեկավար հաստատել ք.գ.դ. Տիգրան Քոչարյանին:

զ/ ԵՊՀ առկա ուսուցման 1-ին տարվա ասպիրանտ Դավիդ Սարկիսյանի թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել «Գերմանիայի Դաշնային Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի հետ 2005-2015թթ» ԻԳ.00.04. «Միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար: Գիտական ղեկավար հաստատել պրոֆ. պ.գ.դ. Գ. Պետրոսյանին:

դ/ ԵՊՀ առկա ուսուցման 1-ին տարվա ասպիրանտ Էրիկ Դավթյանի ատենախոսության թեմա հաստատել «Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան ռազմաքաղաքական և տնտեսական եռակողմ համագործակցության միտումները (1991-2015թթ)» ԻԳ.00.04. «Միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար: Գիտական ղեկավար հաստատել պրոֆ. պ.գ.դ. Վ.Բայբուրդյանին:

3. Ասպիրանտուրա ընդունվելու համար երաշխավորել միջազգային հարաբերությունների մագիստրոս Լիլիթ Սարիբեկյանին, Էլբակյան Էդգարին, Բալայան Միսաքին, Քաղաքագիտության մագիստրոսներ Տաթևիկ Մանասյանին, Սիրանույշ Մելիքյանին, Նազելի Բադալյանին:
4. Միջազգային հարաբերությունների մագիստրոս Էդկար Չախոյանի «Վրաց-թուրքական հարաբերությունների զարգացման դինամիկան 2003-2013թթ.» հոդվածը երաշխավորել հրատարակության ԵՊՀ ՈԻԳԸ գիտական հոդվածների ծողովածուում:
5. ա/ Ընտրել հաշվիչ հանձնաժողով և քվեաթերթիկում գրանցել դոցենտի կոչման համար ք.գ.թ. Արտակ Չաքարյանի անունը:

բ/ Անցկացնել փակ գաղտնի քվեարկություն: Փակ գաղտնի քվեարկությունից հետո գիտական խորհրդի նիստը հաստատեց հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը, ըստ որի խորհրդի 21 անդամներից քվեարկությանը մասնակցել են 15-ը և ձայները բաշխվել են հետևյալ կերպ`

**Չաքարյան Արտակ – 15 կողմ, դեմ չկա, անվավեր քվեաթերթիկ չկա:**

**Գիտական խորհրդի նախագահ, պրոֆ.**

**Գ. Պետրոսյան**

**Գիտական խորհրդի քարտուղար, դոց.**

**Խ. Գալստյան**

